

**1.2.3. Ձկնորսություն, ձկնաբուծություն**

Հանրապետությունում 2004թ. հունվար-դեկտեմբերին, համաձայն ձկնորսությամբ և ձկնաբուծությամբ զբաղվող առևտրային կազմակերպությունների ներկայացրած պետական վիճակագրական հաշվետվությունների տվյալների, իրականացվել է 1702.8 մլն. դրամի ձկան որս, որը գերազանցել է 2003թ. մակարդակը 27.8%-ով (համադրելի գներով):

**Ձկնորսության և ձկնաբուծության արդյունքները հանրապետությունում  
2004թ. հունվար-դեկտեմբերին<sup>1</sup>**

(հազ. դրամ)

	2004թ.	2003թ.	2004թ. 2003թ. նկատմամբ,%
Կատարվել է որս ընդամենը, համադրելի գներով (ձկնորսության, ձկնաբուծության ոլորտում)	1702782.5	1332277.0	127.8
<i>որից՝</i> իրացվել է ընդամենը	1702782.5	1332277.0	127.8

<sup>1</sup> Առանց անհատ ձեռնարկատերերի և տնային տնտեսությունների (ոչ ֆորմալ) գործունեության գնահատմամբ: